կաթնածառա՛ալ Clusia galactodendro, հրաշալի է ասար կաթը համով և շատ ընտիր. միանգամայն և նշանաւոր է իւր բժշկական յատկութեամբը։

Գլարան սաստիկ թանչից ցաւէ բռնուելով քիչ ատենէն մահուան դուռը կը հասնի, իրեն կու տան այս կաթէն, երեք ժամ կ'անցնի և ահա բոլորովին կ'առողջանայ, կը կազդուրի. առաւօտեան դէմ հոգեվարք էր և կէսօրը անցած էր իւր մահաբեր հիւանդութիւնը։ Ըստ երևելի բժշկաց և տարբրանից սոյն կաթը իւր մէջ կը բովանդակէ ուռնայլին գոյացութիւններ, որոնք շատ օգտակար դեղեր են աղեաց բորբոքման, շատով կ'անցնեն անոնց ներմութիւնը, ուստի և Գլարան կրնար ազատիլ մահուանէ։

Վենեցուելայի բնակիչք շատ անգամ ըսած են բնապատում քննչաց, որ երբ իրենք հիւանդութիւն ունենան կը խմեն այս կաթը, որ քիչ ժամանակէն կ'անցնէ իրենց տկարութիւնը։

ՄԵԾԱՄԵԾ ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆ Ս. ՂԱԶԱՐ

Մայիս ամսոյն 11ին այցելութեան եկաւ Վանացոյ՝ Սերբիոյ նախկին Միլան թագաւորն հանդերձ իշխանազուն անձերով, որք են՝ Դրքսուհիք, Դուսմ և Կոմսուհիք. ամենայն կերպով պարտապատշաճ և սիրալիր ընդունելութիւն եղաւ. այցելութիւնը գրեթէ ժամ ու կիսու չափ տեւեց՝ յետ որոյ քաղցր համակրութեամբ մեկնեցաւ։

Նոյն օրն այցելութեան եկաւ նաև Փրեզերիկ–կարլ Հոհենլոհէ-Իշխանն, Իշխանուհիներով, որք նոյնպէս բաւական ժամանակ վանքի զբօսաւոր տեղերը այցելելով, մեկնեցան ի Վենետիկ, իրենց հայրենիքը վերադառնալու համար։

Ա. Զ Դ.

1. — Որ և իցէ գիրք՝ թէ հեղինակութիւն և թէ թարգմանութիւն, որ խմբագրութեանս նուէր զրկուի, ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՆԻ երկամեայ պրակաց մէջ պիտի ծանուցուի Նոր հրատարակոտիւնք խորագրով։

2. — Այն հեղինակներն և կամ թարգմանիչք՝ որոնք փոխանակութեամբ իրենց գրոց կը ցանկան (նոյնպէս) մեր տպած գրքերէն ունենալ, պէտք են առաջուց իմացնել մեզ՝ թէ ինչ գիրք է յղելիքը, և ինչ անոր փոխարէն պահանջելիքը։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Շնորհակալութեամբ ստացանք հետևեալ գրքերը.

1. — ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՑՔ XIX–երրորդ դարում. Մասն Ա. (1800–1832)։ Մասն Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ Տ. Յովհաննէս (1831–

digitised by A.R.A.R.@